



ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՆՊԱՏԱԿԸ

Ընկերությունը հանձնառու է իր տնտեսական գործունեության մեջ հետևել սկզբունքայնության, բարի համբավի և հաշվետվողականության բարձր չափանիշներին՝ միաժամանակ ապահովելով բաժնետիրական կապիտալի աճ:

Սույն Ահազանգման քաղաքականության նպատակն է Ընկերության անձնակազմի և Ընկերության հետ տնտեսական գործունեությամբ զբաղվող այլ անձանց համար սահմանել ընդարձակ և լայնածավալ մի գործընթաց, ըստ որի նրանք պարտավոր են բարեխղճորեն զեկուցել ցանկացած խնդրի՝ այդ թվում ֆինանսական հարցերին առնչվող, Վարվեցողության կանոնագրքի և կիրառելի օրենքների և կանոնակարգերի խախտումների վերաբերյալ իրենց մտահոգությունները: Սույն Քաղաքականությունը սահմանում է հետևյալ ընթացակարգերը. երբ և ուր ներկայացնել զեկույցը կամ մտահոգությունները, ով է զբաղվում Ձեր զեկույցով, որն է զեկույցի ուսումնասիրման, փաստագրելու և դրան ընթացք տալու կարգը:

Աուդիտի հանձնաժողովը վերահսկում է համապատասխանությունը սույն քաղաքականությանը:

II. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Սույն Քաղաքականությունը վերաբերում է Ընկերության ողջ անձնակազմին և Ընկերության հետ տնտեսական գործունեությամբ զբաղվող երրորդ անձանց համար սահմանում է դրույթներ, որոնց համաձայն նրանք պարտավոր են բարեխճորեն զեկուցել:

III. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«Անհիմն մեղադրանքներ» - անհիմն մեղադրանքները դրանք առանց ճշմարտությունը կամ կեղծիքը հաշվի առնելու ներկայացված մեղադրանքներն են: Նման մեղադրանքներ ներկայացնող անձինք կարող են կարգապահական տույժի ենթարկվել և/կամ նրանց դեմ կարող է դատական հայց ներկայացվել նման վարվեցողության համար մեղադրվող անհատների կողմից:

«Վարվեցողության կանոնագիրք» նշանակում է Ընկերության Տնօրենների խորհրդի կողմից հաստատված արժեքների և ղեկավար սկզբունքների հստակ շարադրանք:

«Ընկերություն» նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը և նրա դուստր ընկերությունները:

«Ընկերության անձնակազմ» նշանակում է Ընկերության բոլոր տնօրենները, պաշտոնատար անձինք և աշխատողները:

«Տնօրեն» նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության և նրա դուստր ընկերությունների Տնօրենների խորհրդի անդամ:

«Տինանսական հարցեր» նշանակում է Ընկերության հաշվապահական, ներքին հսկողության և աուդիտորական գործընթացներ:

«Հետազննում իրականացնող» նշանակում է գնահատում իրականացնելու և, օբյեկտիվ փաստարկների առկայության դեպքում, զեկուցված խնդիրների հետազննություն իրականացնելու համար Ընկերության աուդիտի հանձնաժողովի կողմից նշանակված անձ (անձինք):

«Վրեժխնդրություն» նշանակում է պատժի կամ բացասական հետևանքի որևէ տեսակ, ներառյալ պայմանագրի դադարեցում, պաշտոնից ժամանակավորապես հեռացում, պաշտոնի իջեցում, այլ հաստիքի տեղափոխում, հետապնդում կամ խտրականության ցուցաբերում:

IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Զեկուցման գործընթաց

Ընկերությունը կիրառում է բաց դռների քաղաքականություն, համաձայն որի Ընկերության բոլոր աշխատակիցները կարող են վստահորեն կիսվել իրենց խնդիրներով, մտահոգություններով և առաջարկություններով այն անձանց հետ, ովքեր կարող են պատշաճ կերպով զբաղվել այդ հարցերով: Դա կարող է լինել անմիջական ղեկավարը կամ, ըստ անհրաժեշտության, որևէ մեկը ղեկավարությունից, ում աշխատակիցը հարմար կգտնի մոտենալ իրեն հուզող հարցով: Այն անձը ում աշխատակիցը կմոտենա իր խնդիրներով, պետք է տվյալ հարցի վերաբերյալ զեկուցի Ընկերության Պահանջների համապատասխանության ապահովման գծով պատասխանատուին, աուդիտի հանձնաժողովին կամ Տնօրենների խորհրդին:

Մտահոգությունները կարող են նաև ուղարկվել Ընկերության գաղտնի ահազանգման էլեկտրոնային հասցեին կամ փոստով: Դուք կարող եք տրամադրել Ձեր կոնտակտային տվյալները կամ Ձեր զեկույցն ուղարկել անանուն էլեկտրոնային հասցեից: Խնդրում ենք նկատի ունենալ, որ զեկույցն անանուն ուղարկելու դեպքում որևէ հետազննության ընթացքում Ձեզ հետ հետագա հաղորդակցությունը կսահմանափակվի: Մտահոգություն առաջացնող հարցերը կհանձնվեն և կհետազննվեն աուդիտի հանձնաժողովի մեկ կամ ավելի անդամների և Ընկերության իրավական հարցերով խորհրդատուի կողմից: Մտահոգություններն ու հարցերը պետք է ուղարկվեն հետևյալ էլեկտրոնային հասցեին.

Whistleblower@lydianinternational.co.uk

Կամ հետևյալ փոստային հասցեին.

ԳԱՂՏՆԻ Է

STIKEMAN ELLIOT LLP
D'Arcy Nordick
5300 Commerce Court West, 199
Bay Street,
Toronto, ON, Canada M5L
1B9

Փոստային նամականիշի կամ հետադարձ հասցեի բացակայության պատճառով Ձեր զեկույցը կարող է չհասնել մեզ:

Դիմում-նամակի որևէ հատուկ ձևաչափ սահմանված չէ: Սակայն մենք խորհուրդ ենք տալիս ներառել առնվազն հետյալը.

1. Ֆինանսական հարցերի և Վարվեցողության կանոնադրքի հավանական խախտումների առնչությամբ Ձեր մտահոգությունների բնույթի մանրամասն նկարագրություն:
2. Այն անձանց անուններն ու հաստիքները, ովքեր հավանաբար ներգրավված են այդ խնդրում կամ կապ ունեն դրա հետ:
3. Ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգնել Ձեր զեկուցումը փաստերով հիմնավորելուն:
4. Ձեր էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը, եթե ցանկանում եք, որ մենք կապվենք Ձեզ հետ:

Բ. Վրեժխնդրության գործողություններն արգելվում են

Ընկերությունը որդեգրել է մի ռազմավարություն, ըստ որի դուք կարող եք Ձեր մտահոգությունների մասին բացեիբաց զեկուցել՝ պաշտպանված լինելով վրեժխնդրությունից: Սույն Քաղաքականության համաձայն խախտումների վերաբերյալ բարեխղճորեն զեկուցող Ընկերության անձնակազմի բոլոր անդամները և Ընկերության հետ տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր անձինք պաշտպանված կլինեն վրեժխնդրությունից:

Գ. Բարեխիղճ գործելակերպ

Սույն Քաղաքականության համաձայն զեկույց ներկայցնող ցանկացած անձ պետք է գործի բարեխղճորեն և իսկապես համոզված լինի, որ զեկույցը հիմնավորված է, այդ թվում՝ օբյեկտիվ փաստերով և այլ հիմքերով: Ցանկացած անհիմն մեղադրանք կամ միտումնավոր կերպով մոլորեցնող ու չարամիտ ցանկացած մեղադրանք կհամարվի լուրջ իրավախախտում:

Դ. Ձեկույցների ուսումնասիրություն

Ահագանգման էլեկտրոնային հասցեին կամ փոստով որևէ մտահոգություն ստանալուց հետո սովորաբար իրականացվում են ստորև նշված ընթացակարգերը.

1. Ձեր կոնտակտային տվյալների առկայության դեպքում Ընկերության՝ այդ նպատակի համար նշանակված հետազննում իրականացնողը տասը աշխատանքային օրվա ընթացքում կհաստատի, որ ձեզ մտահոգող խնդրի վերաբերյալ նամակը ստացվել է:
2. Հետազննում իրականացնողը կգրանցի Ձեր զեկույցը գրանցամատյանում և գործ կկազմի: Գրանցամատյանն ու կազմված գործի փաստաթղթերը կլինեն գաղտնի, ապահով և կարխիվացվեն: Տեղեկությունները կհայտնվեն այլ անձանց միայն ծառայողական անհրաժեշտության սկզբունքով՝ հետազննում իրականացնողի որոշման և սույն Քաղաքականության համաձայն:
3. Եթե հետազննում իրականացնողը որոշում է, որ Ձեր մտահոգություններն ունեն օբյեկտիվ փաստարկներ, և որ սույն Քաղաքականության գործողությունը տարածվում է դրանց վրա, նա պետք է հետազննություն իրականացնի և որոշի, թե արդյոք անհրաժեշտ է հետագա գործողություններ ձեռնարկել: Հետազննությունն իրականացնելիս, հետազննում իրականացնողը կարող է հաշվապահական, մարդկային ռեսուրսների հարցերով, իրավական և այլ ներքին և արտաքին խորհրդատուներ հավաքագրել, ինչպես նաև պետք է հետազննության կարգավիճակի մասին զեկույցի աուդիտի հանձնաժողովին:
4. Հետազննում իրականացնողը հետազննության ընթացքում պետք է հետևի բոլոր կանոններին, կանոնակարգերին և համապատասխան օրենսդրությանը և, անհրաժեշտության դեպքում, պետք է զեկույցի և հետազննությանն առնչվող տեղեկությունների գաղնիության պահպանման ուղղությամբ ողջամիտ քայլեր ձեռնարկի: Որոշ հանգամանքներում Ընկերությունից կարող է պահանջվել ժամանակին հրապարակել ֆինանսական հարցերին առնչվող էական խախտումները կամ Վարվեցողության կանոնագրքի խախտումները կամ այլ հարցերը՝ արժեթղթերի շուկայի վերաբերյալ կիրառելի օրենքների և կանոնակարգող պահանջների համաձայն:
5. Հետազննության ողջ գործընթացը պետք է լինի արդյունավետ՝ հաշվի առնելով դրանում ներառված հարցերի բնույթն ու բարդությունը:
6. Հետազննում իրականացնողը պետք է աուդիտի հանձնաժողովին և Ընկերության արտաքին աուդիտորներին զեկույցի ստացված զեկույցների ընդհանուր քանակի, իրականացված հետազննությունների քանակի և յուրաքանչյուր զեկույցված հարցի շուրջ կայացրած եզրակացության մասին: Անհրաժեշտության դեպքում աուդիտի հանձնաժողովը կարող է այդ զեկույցները քննարկել Տնօրենների խորհրդի ողջ կազմի հետ:
7. Հետազննում իրականացնողը պետք է աուդիտի հանձնաժողովին անհապաղ հայտնի յուրաքանչյուր հիմնավորված զեկույցի մասին, որը կարող է Ընկերության համար բացասական հետևանքներ ունենալ:

2. Երրորդ անձանց կողմից ներկայացված զեկույցներ

Արժեթղթերի շուկայի վերաբերյալ օրենքների համաձայն՝ Ընկերությունը պետք է ֆինանսական հարցերին վերաբերող, ներառյալ երրորդ անձանցից ստացվող զեկույցների ստացման, արխիվացման և քննման հատուկ ընթացակարգ սահմանի: Ընկերության հետ տնտեսական գործունեություն իրականացնող երրորդ անձանց կողմից մտահոգությունների բարեխիղճ կերպով ներկայացումը խրախուսվում է. դրանք պետք է ուղղարկվեն ահագանգման էլեկտրոնային հասցեին կամ փոստով: Եթե Ընկերության որևէ աշխատակցի հայտնում են որևէ մտահոգության մասին, այդ աշխատակիցը պետք է երրորդ անձին տրամադրի այս Քաղաքականության օրինակը և նպաստի, որ նա այդ մտահոգության մասին զեկույցի, եթե այս Քաղաքականությունն ուսումնասիրելուց հետո նրանք բարեխղճորեն գտնում են, որ անհրաժեշտ է զեկույզել այդ հարցի մասին: Բաժին 2-ում և 3-ում սահմանված դրույթները տարածվում են Ընկերության հետ տնտեսական գործունեություն իրականացնող երրորդ անձնաց վրա:

Է. Փորձաստուգում

Սույն Քաղաքականության մեջ նշված էլեկտրոնային և փոստային առաքման մեխանիզմներն առնվազն տարին մեկ անգամ պետք է փորձաստուգման ենթարկվեն:

Ը. Այլ

Տնօրենների խորհուրդը կարող է ժամանակ առ ժամանակ սույն Քաղաքականության պայմաններից շեղումներ թույլատրել, ներառյալ հետադարձ ուժով: Սույն Քաղաքականությունը նախատեսված չէ Ընկերության, Ընկերության անձնակազմի, բաժնետերերի, արժեթղթերի սեփականատերերի, հաճախորդների, մատակարարների, մրցակիցների, աշխատողների կողմից քաղաքացիական կամ նրանց անունից որևէ այլ տեսակի պատասխանատվության ենթարկելու համար:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2018թ. օգոստոսի 14-ին: